ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԳՆԱԿԻՆ ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Անունների քանակական բնութագրումն իրագործվում է թվի քերականական կարգի միջոցով, որը հատուկ է եղել հայերենին նրա ամբողջ պատմության ընթացքում, թեև հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում այն ունեցել է տարբեր դրսևորում և տարբեր արժեք, ըստ այնմ, թե թվի քերականական կարգ արտահայտող ձևույթները թվային իմաստների ինչ տիպի հակադրություններ են ստեղծել՝ (եզակի/հոգնակի, եզակի/երկակի/հոգնակի, եզակի/հոգնակի/հավաքական, եզակի/հոգնակի/անեզական/անհոգնական և այլն)։ Այսպես, գրաբարում հոգնակի թիվը իմաստով հակադրվում է ոչ միայն եզակիին, այլև մի կողմից՝ հավաքական անուններին, մյուս կողմից՝ անեզական և անհոգնական անուններին։ Սակայն բոլոր թվային իմաստները չեն, որ արտահայտվում են առանձին ձևույթների միջոցով։ Գրաբարում կան միայն հոգնակի կազմող ձևույթներ (հոգնակերտ մասնիկներ) և հավաքական իմաստ արտահայտող ձևույթներ, և թեև հոգնակերտների ու հավաքական ձևույթների գործածության սահմանները խստորեն անջրպետված չեն, անհրաժեշտ դեպքում նրանցով կարելի է արտահայտել իմաստային տարբերություններ։ Մնացած թվային իմաստների ձևական արտահայտությունն այն է, որ եզակի թիվը հոգնակիին հակադրվում է որևէ թվանիշ ձևույթի բացակայությամբ։ Անեզական անունները նշելով մեկ առարկա, երբեք հանդես չեն գալիս եզակի ձևով, իսկ անհոգնականները (հատուկ անուններ, վերացական և նյութական անուններ) հոգնակերտներ չեն ընդունում, նրանք անտարբեր են թվի քերականական կարգի նկատմամբ։

Միջին գրական հայերենում պահպանվել է թվի քերականական կարգի հիմնական իմաստային հակադրությունը՝ եզակի/հոգնակի։ Գրաբարի հավաքական իմաստ ունեցող ձևույթները վերածվել են հոգնակերտների և տարածվել նաև այնպիսի անունների վրա, որոնք հավաքականություն չէին կարող արտահայտել։ Անհոգնական անուններ համարյա չեն պահպանվել (բացառյալ հատուկ անունները)։ Յուրաքանչյուր հասարակ անուն, անկախ նրա բառիմաստի վերացարկման աստիճանից, կարող է ստանալ հոգնակերտ մասնիկ, թեև այսպիսով որոշ դեպքերում նույն բառի եզակի և հոգնակի ձևերի միջև կարող է իմաստային խզում առաջանալ. հոգնակին կարող է ստանալ իմաստային նոր երանգ։ Ինչ վերաբերում է անեզականներին, ապա չնայած դրանք բավական մեծ թիվ են կազմում, սակայն հիմնականում հանդես են գալիս որպես հնաբանություններ կամ փոխառություններ գրաբարից և մեծ մասամբ պահպանում են իրենց գրաբարյան հոլովման հարացուցային ամբողջականությունը։ Որպես էական տարբերություն գրաբարից պետք է նշել երկակի թվի որոշ արտահայտությունների առկայությունը միջին հայերենում (վի ձևույթը)՝, որ սակայն հստակ ձևավորված արտահայտություն չի գտնում, գործածության որոշակի իմաստային սահմանազատում չի ստանում, քանի որ այս մասնիկն են ընդունում նաև մի շարք այնպիսի բառեր, որոնց համար այն պարզապես հոգնակերտ է և իմաստային տեսակետից չի արդարացված։

Եզակի թիվը միջին հայերենում, ինչպես գրաբարում և աշխարհաբարում, հոգնակիին հակադրվում է քերականական թվի զրո ձևույթով։ Հոգնակին կազմվում է հոգնակերտ ձևույթներով, որոնք աչքի են ընկնում իրենց բազմաթվությամբ։ Դրանք իրենց գործածության սահմաններով խստորեն սահմանազատված չեն, հանդես են գալիս որպես միևնույն քերականական իմաստն արտահայտող ձևույթի ազատ տարբերակներ։ Բացի մի քանի սակավ գործածություն ունեցող ձևույթներից, որոնք հիմնականում պայմանավորված են դիրքով, մյուսները, մանավանդ ամենագործածականները, ունեն հնարավոր փոխանցումների բավական ազատ սահմաններ, թեև յուրաքանչյուրի տարածման ոլորտի մեջ, այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել ձևական և իմաստային ընդհանուր հատկանիշներ ունեցող բառերի որոշ խմբավորումներ։ Հոգնակերտ ձևույթների կուտակման հետ միաժամանակ միջին հայերենի հոգնակին բնորոշվում է նաև նրանց ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության խիստ արտահայտված անհամաչափությամբ։ Անունների հսկայական մեծամասնությունը հոգնակի է կազմում չորս հիմնական ձևույթներից որևէ մեկով (ք, եր, ներ, եի), մնացած հոգնակերտները ունեն սահմանափակ գործածություն, իսկ նրանց մեծ մասը մեզ հասել է մեկ-երկու վկայությամբ։

Ստորև ներկայացվում են միջին հայերենի հոդնակերտ ձևույթները՝ հաշվի առնելով նրանց ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության աստիճանը (թվարկման հերթականությունը ըստ նվազող հաճախականության) և նրանց բաշխման պայմանները ըստ ձևական ու իմաստային ընդհանուր հատկանիշների։ Այդպիսի հատկանիշների բացակայությունը նշվում է բացասական նշանով (—), իսկ այն ձևույթները, որոնց բաշխման մեջ մտնում են նաև ձևական և իմաստային անմիատարրությամբ բնորոշվող բառախմբեր, նշանակվում են աստղանիշով։ Որպես լուսաբանություն բերվում են միջնադարյան մատենագրությամբ վկայված օրինակներ։

Աղյուսակ 1

№	Հոդնակերտ ձևույթներ	Խմբավորում ըստ իմաստային ընդհանուր հատկանիշների	Խմբավորում ըստ ձևական ընդհանուր հատկանիշների	Օրինակներ
1	f*	1. շնչավոր առարկաներ նշանակող անուններ (անձինք և կենդանիներ)		բարեկամ-բարեկամք առիւծ-առիւծք
		2. գոյականաբար առնվող ածականներ		արդար-արդարք
		3. հարակատար և ենթակայական դերբայներ		խածած-խածածք աշխատող-աշխատողք
			4-ի, ու, ա ձայնավորներով վերջացող անուններ	այդի-այդիք ածու-ածուք տղայ-տղայք
2	br*	—	1. Միավանկ բառեր	ազգ-ազգեր
			2. ի վերջընթեր ձայնավորով երկվանկ բառեր	մարմին-մարմներ
			3. բազմավանկ բարդ բառեր՝ վերջին միավանկ բաղադրիչով	այգեպան-այգեպաներ
3	ճի*	—	երկվանկ բառեր	դարպաս-դարպասնի
4	ճեr*	—	մեկից ավելի վանկ ունեցող բառեր	մարդարիտ-մարգարիտներ
5	ուճf	—	—	աղղիկ-աղղկունք
6	վի*	Մարմնի զույգ անդամներ նշանակող բառեր	—	ծունկ-ծնկվի
7	ռճի	—	—	ամրոց-ամրոցանի
8	ռճf	—	—	միրգ-մրգանք
9	սառճ	—	ի հանդող բազմավանկ բառեր	քամի-քամիստան
10	այf*	անձ ցույց տվող անուններ	—	իշխան-իշխանայք
11	որայf	տեղ ցույց տվող անուններ	—	արտ-արտորայք
12	իf	—	—	ծանօթ-ծանօթիք
13	տի	—	—	այրիկ-այրկտի
14	տf	—	—	վարպետ-վարպետաք
15	տճ	—	—	ձի-ձիան
16	եճի	—	—	բախչա-բախչենի
17	տրէf	—	—	գիւղ-գիւղարէք
18	իկ	—	—	մարդ-մարդիկ
19	եաճ	—	—	էշ-իշեան
20	nf	—	—	շատ-շատոք
21	ոճf	—	—	շատ-շատոնք
22	ուճաf	—	—	ծաղիկ-ծաղկունաք
23	էf	—	—	աղախին-աղախնէք

Վերը նշված մասնիկները հանդես են գալիս ոչ միայն առանձին-առանձին. միջին հայերենում սակավ չեն այն դեպքերը, երբ որևէ բառ միաժամանակ ստանում է մեկից ավելի հոգնակերտներ, որոնք կարող են միմյանց հետ կազմել ամենարազմազան զուգորդումներ, հիմնականում՝ երկու բաղադրիչից, սակավ դեպքերում՝ ավելի։ Այս բաղադրյալ հոգնակերտների կիրառությունը խիստ սահմանափակ է, հաճախ վկայված ընդամենը մեկ բառով։ Վի, նի, տի, ստան (մի դեպքում նաև եր) ձևույթները, երբ հանդես են գալիս որպես բաղադրյալ հոգնակերտների առաջին բաղադրիչ, շեշտի դիրքի փոփոխության պատճառով կորցնում են իրենց ձայնավորը, մյուս հոգնակերտները հնչյունափոխության չեն ենթարկվում։ Բաղադրյալ հոգնակերտները ներկայացնում են հետևյալ պատկերը։

Աղյուսակ 2

Հ/Հ	Բաղադրյալ հոգնակերտներ	Բաղադրիչներ	Օրինակներ
1(24)	երք	եր+ք	գետերք
2(25)	նիք	նի+ք	կնկնիք
3(26)	անիք	անի+ք	սարկաւագանիք
4(27)	վիք	վի+ք	իրվիք
5(28)	տիք	տի+ք	ծակտիք
6(29)	եանք	եան+ք	գրեանք
7(30)	իկք	իկ+ք	մարդիկք
8(31)	երայք	եր+այք	դեղերայք
9(32)	րանք	եր+անք	դեղրանք
10(33)	վանք	վի+անք	իշվանք
11(34)	երնի	եր+նի	սրտերնի
12(35)	վնի	վի+նի	աչվնի
13(36)	վանի	վի+անի	իշվանի
14(37)	վեր	վի+եր	աչվեր
15(38)	վներ	վի+ներ	աչվներ
16(39)	վտի	վի+տի	քուրվտի
17(40)	վան	վի+ան	իրվան
18(41)	երվի	եր+վի	զօդվածերվի
19(42)	տիկ	տի+իկ	մանկտիկ
20(43)	ստներ	ստան+եր	հայրենեստներ
21(44)	վտանք	վի+տի+ան+ք	իրվտանք

Հետևյալ աղյուսակը ավելի ակնառու կերպով է արտացոլում բաղադրիչների հնարավոր զուգորդումները և թույլ է տալիս պարզելու, թե նրանցից որոնք կարող են լինել բաղադրյալ հոգնակերտների առաջին բաղադրիչներ (ուղղահայաց շարք) և որոնք՝ երկրորդ (հորիզոնական շարք)։

Աղյուսակ 3

Ձևույթներ	եր	տի	նի	անի	վի	իկ	ք	այք	անք	ան	ներ	ան+ք
եր		—	+	—	+	—	+	+	+	—	—	—
տի	—		—	—	—	+	+	—	—	—	—	—
նի	—	—		—	—	—	+	—	—	—	—	—
անի	—	—	—		—	—	+	—	—	—	—	—
վի	+	+	+	+		—	+	—	+	+	+	—
իկ	—	—	—	—	—		+	—	—	—	—	—
եան	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—
ստան	+	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
վի+տի	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+

Ինչպես երևում է աղյուսակից, եան, սաան հոգնակերտները կարող են լինել միայն բաղադրյալների առաջին բաղադրիչ, f, այf, անf, ներ, ան հոգնակերտները՝ միայն երկրորդ բաղադրիչ. մյուսները դիրքային սահմանափակություն չունեն։ Իրենց կազմի մեջ f պարունակող հոգնակերտները դրվելով որևէ այլ հոգնակերտից առաջ, չեն պահպանում հոգնակիության իմաստը, այլ ձեռք են բերում բառակազմական ֆունկցիա, ինչպես՝ աշfեr, ունfեr, եաufեr, fեfեr։ Այս կարգի բառերը եզակի ուղղականում հաճախ ունեն կրկնակ ձևեր՝ f-ով և առանց f-ի (եաu-եաuf)։

Թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ ձևույթները կցվում են հիմքի վերջից։ Ընդ որում, հիմքը կարող է մնալ անփոփոխ, այդ դեպքում կունենանք մաքուր հիմք, որ հիմնականում համընկնում է եզակի ուղղականի հետ։ Հիմքի հնչյունափոխությունը քերականական ծանրաբեռնվածություն չունի և կարող է լինել երկու տիպի՝ շեշտից կախված և շեշտից անկախ։ Առաջինը տեղի ունի այն դեպքում, երբ հոգնակերտ ձևույթը իր մեջ որևէ վանկարար ձայնավոր ունի, և քանի որ կցվում է վերջից, իր վրա է վերցնում բառի շեշտը և առաջացնում նախորդ վանկի ձայնավորի հնչյունափոխություն։ Շեշտից անկախ հնչյունափոխությունը հիմնականում հանդիպում է այն դեպքերում, երբ հոգնակին կազմվում է f ձևույթով, որը շեշտի դիրքի փոփոխություն չի առաջացնում։ Այստեղ հնչյունափոխությունը փաստորեն հանգում է հիմքի ձայնավորների կամ ձայնորդների հնչյունական հերթագայության կամ ձայնդարձի, որն արտացոլում է լեզվի զարգացման ավելի նախնական վիճակը, գործում չէ միջին հայերենում և պահպանվել է բառամթերքի այն մասում, որ ընդհանուր է միջին հայերենի և գրաբարի համար. ընդ որում հիմքի ոչ հստակ գիտակցումը հանգեցնում է այն բանին, որ հոգնակին միևնույն բառի համար ունենում է տարբեր հիմքակազմ տարրեր, առաջացնելով հնչյունական տարբերակներ (լեռուեf, լեռիեf, լեռաեf)։

Հոգնակերտ f-ի և նրան նախորդող հիմքակազմ ձայնավորների կապակցությունները սկսելով գիտակցվել որպես առանձին հոգնակերտ մասնիկներ, տարածվում են նաև այլ՝ մաքուր հիմքերի վրա։ Որոշ դեպքերում հոգնակի ուղղականում հանդես է գալիս ե հիմքակազմ տարրը, որը եզակիում ընկել է։ Ք հոգնակերտի դեպքում այս ե տարրը ուղեկցվում է ձայնորդին նախորդող ի, ու կամ ա ձայնավորով, այլ հոգնակերտների դեպքում վերջահանգ ձայնավորը բացակայում է, բայց տեղի ունի նախորդ վանկի՝ շեշտից կախված հնչյունափոխություն, ըստ ընդհանուր օրինաչափությունների։ Հետևյալ աղյուսակը արտացոլում է յուրաքանչյուր հոգնակերտի դեպքում հիմքի ձևավորման առանձնահատկությունները, հնչյունափոխված հիմքերի տիպերը, հերթադայությունների և այլ հիմքակազմ տարրերի ընտրության պայմանները։

Աղյուսակ 4

Հոգնակերտ ձևույթներ	Անփոփոխ հիմք	Հնչյունափոխված հիմք		Օրինակներ
	դրանց ընտրության պայմանները		հերթադայությունների տիպերը	
1	2	3	4	5
ք	ա) ձայնավորահանգ հիմքեր բ) բաղաձայնահանգ հիմքեր			այգի-այգիք ագդակից-ագդակիցք
		գ) ձայնորդահանգ հիմքեր	1. ը/ե	կայսր-կայսերք
			2. ը/ա	սերմն-սերմանք
			3. ը/ի	դառն-դառինք
			4. ը/ու	հարսն-հարսունք
			5. այ/ա	եղբայր-եղբարք
			6. ու/ուա	անուն-անուանք
			7. օ/աու	օր-աուրք
			8. ուն/ր	դուռն-դուրք
			9. ուն/ռուն	լեռն-լեռունք
			10. ուն/ռան	լեռն-լեռանք
			11. ուն/ռին	լեռն-լեռինք
			12. ու/ը-ուն/ռուն	դուռն-դռունք

1	2	3	4	5
եր	ա) ա ձայնավորով միավանկ հիմքեր			բան-բաներ
	բ) վերջին վանկի ե և ո ձայնավորներով հիմքեր			բժշկապետ-բժշկապետեր
				անուշահոտ - անուշահոտեր
		գ) վերջին վանկի ա, է, ի, ու ձայնավորներով հիմքեր	1. ա/ը	դասատան-դասատներ
			2. է/ի	ձէթ-ձիթեր
			3. ի/ը	սիրտ-սրտեր
			4. ի/Ø	աղախին-աղախիններ
			5. ա/Ø	ակռայ-ակռեր
			6. ու/ը	ծուխ-ծխեր
			7. ու/Ø	կերակուր-կերակրեր
			8. ու/ով	ձու-ձվեր
			9. ու/վը	անուն-անվներ
		դ) ուրիւն հանգող հիմքեր	10. իւ/ե	վկայութիւն-վկայութիւններ
ների	ա) ա ձայնավորով վերջացող հիմքեր			ծառայ-ծառաների
	բ) վերջին վանկի ե և ո ձայնավորներով հիմքեր			արուեստ-արուեստների
				ծսվծկոց-ծսվծկոցների
		գ) վերջին վանկի ա, է, ի, ու ձայնավորներով հիմքեր	1. ա/ը	գանգատ-դանգատների
			2. է/ը	գոմէշ-գոմշների
			3. ի/ը	ծաղիկ-ծաղկների
			4. ի/Ø	սիրելի-սիրելների
			5. ու/ը	կարմունջ-կարմընջների
			6. ու/վը	թթու-թթվների
			7. ուա/վը	երդուած-երդվածների
		գ) կին հիմքը	8. ի/ա	կին-կանանի
		ե) աստղ հիմքը	9. ը/ե	աստղ-աստեղների
ներ	ա) ա ձայնավորով երկվանկ հիմքեր			գաւաթ-գաւաթներ
	բ) վերջին վանկի ո ձայնավորով հիմքեր			փողոց-փողոցներ
		գ) վերջին վանկի ա ձայնավորով բազմավանկ բառեր	1. ա/ը	գերեզման-գերեզմաններ
			2. ի/ը	գետին-գետններ
		դ) վերջին վանկի ի և ու ձայնավորներով հիմքեր	3 ի/Ø	դրացի-դրացներ
			4. ու/ը	արմունկ-արմնկներ
			5. ու/վը	թթու-թթվներ
		ե) ուրիւն հանգող հիմքեր	6. իւ/ե	սպանութիւն-սպանութիւններ

1	2	3	4	5
ունք	ա) ա և ո ձայնավորներով միավանկ հիմքեր			ազգ-ազգունք ողբ-ողբունք
		բ) իկ հանգող հիմքեր	1. ի/Ø	ծաղիկ-ծաղեունք
		դ) վերջին վանկի է և ու ձայնավորներով հիմքեր	2. է/ի 3. ու/ը	երեց-երիցունք սուրբ-սրբունք
		դ) բոյս հիմքը	4. ոյ/ու	բոյս-բուսունք
		ե) գիր հիմքը	5. ի/ը	գիր-գրունք
անի	ա) բոլոր հիմքերը, բացի բ) և գ) կետերով վերապահված դեպքերից			
		բ) կին հիմքը	1. ի/ը	կին-կնանի
		գ) կոյս հիմքը	2. ոյ/ու	կոյս-կուսանի
վի		վերջին վանկի ա, ի, է, ու ձայնավորներով հիմքեր	1. ա/ը 2. ի/ը 3. է/ի 4. ու/ը 5. ու/Ø	ականջ-ականջվի գիր-գրվի մէջ-միջվի ըղունկ-ըղնկվի վերակացու-վերակացվի
անք		ի, ու ձայնավորներով հիմքեր	1. ի/ը 2. ու/ը	միս-մսանք հունա-հնտանք
ստան		ի հանգող հիմքեր	ի/ե	հոգի-հոգեստան
այք	ա) ամեն, իշխան. պարոն հիմքերը			ամեն-ամենայք իշխան-իշխանայք պարոն-պարոնայք
		բ) կին հիմքը	1. ի/ա	կին-կանայք
		գ) տիկին, տանտիկին հիմքերը	2. ի/Ø	տիկին-տիկնայք տանտիկին-տանտիկնայք
տի		ա) այրիկ հիմքը	1. ի/Ø — Ø/ը	այրիկ-այրկտի
		բ) մանուկ հիմքը	2. ու/Ø — Ø/ը	մանուկ-մանկտի
ան	ա) ձի հիմքը			ձի-ձիան
		բ) ջորի հիմքը	1. ի/ե	ջորի-ջորեան
		գ) էշ հիմքը	2. է/ի	էշ-իշեան
եան		էշ հիմքը	/ի	էշ — իշեան
ունք		ծաղիկ հիմքը	ի/Ø	ծաղիկ-ծաղկունք
էք		աղախին հիմքը	ի/Ø	աղախին-աղախնէք
ենի	ա) գալ (գայլ) հիմքը			գալ-գալենի

Միջին հայերենի հոգնակիի նկարագրությունը չի կարելի լրիվ համարել առանց նշելու հոգնակերտների հնարավոր փոխանցումների սահմանները։ Ինչպես արդեն ասվել է, տարածման ամենալայն ոլորտ ունեցող հոգնակերտները (հիմնականում f, եr, ներ, ենի) կարող են զուգահեռաբար գործածվել մյուս հոգնակերտների դիրքում համարյա առանց սահմանափակության։ Միմյանց նկատմամբ ազատ տարբերակների հարաբերության մեջ գտնվող ձևույթների խմբերը կարող են բաղկացած լինել երկուից մինչև յոթ անդամից, այլ խոսքով մի բառը կարող է ստանալ երկուից մինչև յոթ տարբեր հոգնակերտներ։ Միջին հայերենում հանդիպում են հոգնակերտ ձևույթների հնարավոր փոխանցումների հետևյալ տիպերը։

1. f/եr այգեպանք-այգեպներ
2. f/ներ գետինք-գետններ
3. f/նի արուեստք-արուեստնի
4. f/ունf անգամք-անգամունք
5. f/վի երեսք-երեսվի
6. f/այf ամենք-ամենայք
7. f/ատան հոգիք-հոգեստան
8. f/տնի անձրևք-անձրևանի
9. f/եr/ներ հիւանդութիւնք-հիւանդութիւններ-հիւանդութիւններ
10. f/եr/ուեf գաշտք-գաշտեր-գաշտունք
11. f/եr/վի տունք-տներ-տնվի
12. f/եr/տի ծակք-ծակեր-ծակտի
13. f/եr/տնf միսք-մսեր-մսանք
14. f/եr/իf այծք-այծեր-այծիք
15. f/նի/վի պատճառք-պատճառնի-պատճառվի
16. f/նի/ներ նշանք-նշաննի-նշաններ
17. f/ոf/ոնf շատք-շատոք-շատոնք
18. f/եr/նի/ներ ակռայք-ակռեր-ակռանի-ակռաներ
19. f/եr/ուեf/տեf մրգք-մրգեր-մրգունք-մրգանք
20. f/եr/նի/վի ոտք-ոտեր (ոտներ)-ոտնի-ոտվի
21. f/ներ/նի/ուեf քաղաքք-քաղաքներ-քաղաքնի-քաղաքունք
22. f/ներ/նի/ուեf/ուեաf ծաղիկք-ծաղկներ-ծաղկնի-ծաղկունք-ծաղկունաք
23. f/ներ/նի/վի/վեr ականչք-ականչներ-ականչնի-ականչվի-ականչվեr
24. f/վի/տն/վտանf իրք-իրվի-իրվան-իրվտանք
25. f/եr/ուեf/վի/վեr/վներ/վնի աչք-աչեր-աչունք-աչվի-աչվեr-աչվներ-աչվնի
26. եr/ներ ճանապարհեr-ճանապարհներ
27. եr/նի ամաներ-ամաննի
28. եr/ուեf ազգեr-ազգունք
29. եr/վի ծնկներ-ծնկվի
30. եr/ուայf արտեr-արտուրայք
31. եr/տեf/ուեf հնտեr-հնտանք-հնտունք
32. եr/տեf/վի խոսեr-խոսանք-խոսվի
33. եr/ուեf/իեf որդեr (որդներ)-որդունք-որդինք
34. եr/այf/նի/տնի կներ-կանայք-կաննի-կնանի
35. եr/ուեf/եաեf/վի գրեr-գրունք-գրեանք-գրվի
36. նի/ներ հարեղանի-հարեղաներ
37. նի/ուեf ատամնի-ատամունք
38. նի/ներ/ուեf պոկնի-պոկներ-պոկունք
39. նի/ներ/ուեf/տնիf սարկավագնի-սարկաւագներ-սարկաւագունք-սարկաւագանիք
40. ներ/ուեf աղջիկներ-աղջկունք
41. ուեf/վի եղնկունք-եղնկվի

Ինչպես տեսնում ենք, միջին գրական հայերենում հոգնակի թվի կազմությունը բնորոշվում է հոգնակերտ ձևույթների բազմազանությամբ, նրանց գործածության սահմանների ոչ հստակ անջրպետմամբ, հնարավոր ազատ տարբերակների մեծ առատությամբ։ Այդ առանձնահատկությունները կարելի է բացատրել հին գրական լեզվի ազդեցությամբ, ժամանակի խոսակցական լեզվի տարբեր բարբառներից լեզվական տարբերակների առատ ներթափանցմամբ, հին ու նոր ձևերի գոյակցությամբ, ինչպես նաև լեզվական վերահսկողության ու նորմավորման խիստ անբավարարությամբ։

МНОЖЕСТВЕННОЕ ЧИСЛО ИМЕН В СРЕДНЕАРМЯНСКОМ ЛИТЕРАТУРНОМ ЯЗЫКЕ

Л. С. ОВСЕПЯН

Резюме

Количественная характеристика имен осуществляется грамматической категорией числа, которая была свойственна армянскому языку на протяжении всей его истории, хотя на разных стадиях развития армянского языка она (категория числа) имела различное выражение и ценность.

В среднеармянском языке, как и в грабаре, сохранилась основная формально-семантическая оппозиция грамматической категории числа—единственное /множественное/. Наряду с этим, в отличие от грабара, можно говорить о частичном выражении двойственного числа в среднеармянском языке (морфема ви).

Единственное число в среднеармянском языке противопоставляется множественному нулевой морфемой, тогда как множественное число отличается многочисленностью морфем-вариантов (позиционных и факультативных), выражающих множественность.

В таблицах представлена структура множественного числа, дана дистрибуция морфем с учетом общих формальных и семантических признаков имен.